ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի (ոչ հիմնական շինություն) աճուրդի կազմակերպիչը հայտարարում է Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի բաց դասական աճուրդ:

Լոտ 1 –Մեծ Պարնիի գյուղապետարանի նախկին վարչական շենք՝ ոչ հիմնական փայտյա շինություն:Ներկայումս չի շահագործվում համայնքային կարիքների համար և տրամադրված չէ որևէ անձի՝ օգտագործման նպատակով:

Օտարվում է ապամոնտաժելու և հողատարածքը ազատելու պայմանով:

Գույքի աճուրդով օտարման մեկնարկային գինը 2 200 000 ՀՀ դրամ: Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 1 100 000 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով): Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 110 000 ՀՀ դրամ:

Աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, պայմաններին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Սպիտակի համայնքապետարան (Շահումյան 7, 2-րդ հարկ, 207 սենյակ):

Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ՝ 2024 թ. հունիսի 11-ին:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են անձնագիր և աճուրդի մասնակցության վճարի անդորրագիր 10 000 ՀՀ դրամի չափով՝ վճարված Սպիտակի համայնքապետարանի 900245161410 հաշվեհամարին:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00 մինչև 2024թ. հունիսի 11-ը:

Աճուրդը կայանալու է 2024թ. հունիսի 14-ին ժամը 11.00-ին, Սպիտակի համայնքապետարանում (Շահումյան 7, 3-րդ հարկ, 310 սենյակ):

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ (ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ) ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ: